1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ծուկայի վերահսկողության տեսչական մարմին | Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն | Գլխավոր մասնագետ, (69-27.1-Մ2-2)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր մասնագետը կամ ավագ մասնագետը

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտասի 49/2

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է շուկայում ոչ պարենային արտադրանքի ուսումնասիրություններ (դիտարկումներ).

2. իրականացնում է ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն.

3. տնտեսվարող սուբյեկտների ռիսկերի գնահատման նպատակով իրականացնում է ոլորտային և անհատական ռիսկերի միավորների հանրագումարի հաշվարկ.

4. իրականացնում է տնտեսվարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքներ՝ դրանք դասակարգելով բարձր, միջին և ցածր ռիսկային խմբերում.

5. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ստուգումների պլանավորման միջոցով իրականացնում է Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսվարող սուբյեկտները.

6. իրականացնում է ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ռիսկի կառավարման (գնահատման) մեթոդաբանության մշակում, անհրաժեշտության դեպքում դրա վերանայում.

7. իրականացնում է ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում տեղեկատվության փոխանակում Տեսչական մարմնի ստորաբաժանումների և շահագրգիռ պետական մարմինների միջև.

8. իրականացնում է ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ռիսկերի գնահատման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն.

9. իրականացնում է ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ռիսկերի գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի կազմման և դրա կատարման նկատմամբ հսկման աշխատանքներ.

10. Վարչության լիազորությունների շրջանակներում իրականացնում է հաշվետվությունների, առաջարկությունների և տեղեկանքների նախապատրաստման աշխատանքներ

Իրավունքները.

1. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտների ռիսկերի կառավարման մեթոդների մշակման, նոր ծրագրերի ներդրման նպատակով, ինչպես Տեսչական մարմնի ներսում, այնպես էլ միջազգային համագործակցության շրջանակներում կազմակերպվող քննարկումների, սեմինարների, խորհրդակցությունների, ժողովների ընթացքում քննարկվող հարցերի շուրջ ներկայացնել առաջարկություններ, խնդիրների լուծման տարբերակներ.

2. պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ռիսկը գնահատողների, տնտեսվարող սուբյեկտների, շահագրգիռ այլ կողմերի միջև (ներառյալ՝ Տեսչական մարմնի ստորաբաժանումները) անցկացվող քննարկումներին, խորհրդակցությունների ընթացքում, քննարկվող հարցերի շուրջ ներկայացնել առաջարկություններ.

3. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ներկայացել ռիսկերի կառավարման նոր մեթոդների մշակման առաջարկություններ.

4. Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից, այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից պահանջել ներկայացնել Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

5. Վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված հրավիրել խորհրդակցություններ, ինչպես նաև քննարկվող հարցերի շուրջ ներկայացնել առաջարկություններ:

Պարտականությունները.

1. ուսումնասիրել և վերլուծել ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում շուկայում տիրող իրավիճակի վերաբերյալ պարբերաբար ներկայացվող տեղեկատվությունը, մոնիթորինգի, դիտարկումների արդյունքները և ամփոփել համապատասխան տեղեկատվությունը.

2. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ուսումնասիրության արդյունքների և վերլուծության հիման վրա խնդիրների բացահայտման դեպքում, Վարչության պետին ներկայացել այդ խնդիրների վերացմանն ուղղված գործողությունների ծրագիր՝ համապատասխան հիմնավորումներով և անհրաժեշտ փաստաթղթերով.

3. ոչ պարենային արտադրանքի ոլորտում (խաղալիք, թեթև արդյունաբերություն, բենզին, դիզել, հեղուկ գազ, ցեմենտ, ամրան, օծանելիք, կոսմետիկա, լվացող և մաքրող միջոցներ, կենցաղային և սանիտարահիգիենիկ ապրանքներ, ցածրավոլտ և 1000 Վ-ից բարձր լարման սարքավորումներ, ռադիոսարքավորումներ, քսանյութեր, յուղեր, լաքեր, ներկեր, ապակիներ, կահույք, ամանեղեն և այլն) տեխնիկական կանոնակարգման ենթակա (24 բնագավառ) շուկայահանված վտանգավոր արտադրանքի բացասական հետևանքներից մարդու առողջության և անվտանգության պահպանության, շրջակա միջավայրի, ազգային անվտանգության ապահովման, անբարեխիղճ գործելակերպի կանխարգելման նպատակով ամփոփել տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, համացանցից և Տեսչական մարմնի ստորաբաժանումներից հավաքագրված տվյալները, վերլուծել իրավիճակը և ներկայացնել առաջարկություն.

4. չափագիտության ոլորտում (գնորդի և վաճառողի, արտադրողի և իրացնողի միջև հաշվարկներում, առողջապահության, շրջակա միջավայրի պահպանության, ճանապարհային երթևեկության վերահսկման ժամանակ և այլն) օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա (89 տեսակի) չափման միջոցների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների

իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ամփոփել Հայաստանի Հանրապետությունում շահագործվող չստուգաչափված կամ միջստուգաչափման ժամկետները խախտած ստուգաչափման ենթակա չափման միջոցներ շահագործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, համացանցից և Տեսչական մարմնի ստորաբաժանումներից հավաքագրված տվյալները, վերլուծել իրավիճակը և ներկայացնել առաջարկություն.

5. թանկարժեք մետաղների ոլորտում (թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ հարգորոշման և հարգադրոշմման, մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքի գործունեություններ) գործող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ սահմանված պահանջների և պայմանների խախտմամբ պայմանավորված ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, խախտումների կանխարգելման, բացահայտման ու վերացման նպատակով ամփոփել տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, համացանցից և Տեսչական մարմնի ստորաբաժանումներից հավաքագրված տվյալները, վերլուծել իրավիճակը և ներկայացնել առաջարկություն.

6. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտների վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա ստեղծել տեղեկատվական բազա և վարել.

7. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում գործող տնտեսվարող սուբյեկտների ռիսկերի գնահատման և ըստ ռիսկայնության դասակարգման (բարձր, միջին, ցածր) նպատակով հաշվարկել ոլորտային և անհատական ռիսկերի միավորների հանրագումարը.

8. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտների ռիսկերի բացահայտման, բնութագրման և այդ բացահայտված ռիսկերի կառավարման նպատակով վերլուծել և գնահատել վերահսկման օբյեկտները՝ ըստ ռիսկի գործոնների, վերահսկման օբյեկտները դասակարգել ըստ ռիսկայնության.

9. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում բացահայտված ռիսկերով պայմանավորված առաջարկել վերահսկողության առավել արդյունավետ և նպատակաուղղված մեխանիզմներ.

10. պլանավորել ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ստուգումների տարեկան ծրագրի կազմման աշխատանքները՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բարձր, միջին և ցածր ռիսկայնություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների համամասնությունը այդ ծրագրում.

11. սահմանված ժամկետներում կազմել Տեսչական մարմնին վերապահված ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ստուգումների տարեկան ծրագիրը.

12. ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտներում ըստ ռիսկայնության դասակարգման չափանիշների, ռիսկի կառավարման (գնահատման) մեթոդաբանության վերանայման աշխատանքների իրականացման նպատակով ամփոփել միջազգային, ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի անդամակցության երկրների կողմից ներդրված լավագույն փորձի ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը, վերլուծել և ներկայացնել համապատասխան առաջարկություն.

13. Վերահսկել ոչ պարենային արտադրանքի, չափագիտության, թանկարժեք մետաղների ոլորտները՝ կազմելով դրանց արդյունքներով պայմանավորված համապատասխան փաստաթղթեր.

14. ուսումնասիրել Վարչության գործառույթները կանոնակարգող և գործառույթների իրականացմանն առնչվող իրավական ակտերը, օրենսդրության խախտումների, հակասությունների և բացերի հայտնաբերման դեպքում ներկայացնել դրանց վերացման, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ.

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ
3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Փոփոխությունների կառավարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ
4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: